ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » օգոստոսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-239-25.07.2019-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությանը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի օգոստոսի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1154 - Ա որոշումը:

Հարգանքով՝

/ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-239-25.07.2019-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարությունը ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացնում է հետևյալ դիտարկումները:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է կարգավորել *ֆիզիկական անձանց բջջային հեռախոսներով ամրագրված իրավախախտումներով վարչական վարույթի առանձնահատկությունները, վարչական վարույթի արդյունքների մասին վերջիններիս տեղեկացնելու, ինչպես նաև իրավախախտման մասին էլեկտրոնային հաղորդում ներկայացրած ֆիզիկական անձի անձնական տվյալների փոխանցման անթույլատրելիության վերաբերյալ իրավահարաբերությունները*:

Ընդունելի համարելով նախագծով նախատեսված կարգավորումները՝ այդուհանդերձ, նախագծային դրույթների կիրառման ընթացքում իրավական խնդիրներից խուսափելու, ինչպես նաև նախագծով հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար ստորև ներկայացնում ենք նախագծի վերաբերյալ որոշ նկատառումներ: Այսպես՝

1. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է օրենքի 1-ին /Օրենքի գործողության ոլորտը/ հոդվածում նախատեսել կարգավորում, համաձայն որի՝ *սույն օրենքով են կարգավորվում նաև ֆիզիկական անձանց կողմից բջջային հեռախոսներով տեսանկարահանված կամ լուսանկարահանված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներով վարչական վարույթների առանձնահատկությունները*:

Հարկ է նշել, որ նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *սույն օրենքը կարգավորում է մեխանիկական տրանսպորտային միջոցներով կատարված, տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները*:

Այս առումով օրենքի կառուցվածքային տրամաբանությունը պահպանելու նպատակով առաջարկում ենք օրենքի 1-ին հոդվածը նոր 1.1-ին մասով լրացնելու փոխարեն նախագծով նախատեսված կարգավորումները սահմանել նույն հոդվածի 1-ին մասում՝ դրանում կատարելով համապատասխան փոփոխություններ:

2. Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 1.1-ին մասում և նախագծի ամբողջ տեքստում «բջջային հեռախոսով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «տեխնիկական միջոցով» բառերով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ տեսանյութեր ամրագրելու հնարավորությամբ են ընձեռված ոչ միայն բջջային հեռախոսները, այլև համանման հնարավորություններ ունեցող այլ տեխնիկական միջոցներ, որոնցում գործնականում հնարավոր կլինի ներբեռնել տվյալ բջջային հավելվածը:

3. Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 1.1-ին մասում և նախագծի ամբողջ տեքստում «տեսանկարահանված կամ լուսանկարահանված» բառերն առաջարկում ենք փոխարինել «տեսանկարահանված» բառով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ լուսանկարները նվազեցնում են արարքը որպես իրավախախտում գնահատելու չափելիության և պիտանելիության երաշխիքները:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել նաև նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 7.3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում:

4. Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 7.3-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետում «ֆիզիկական անձին» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հավելվածում գրանցված անձին» բառերով, իսկ «համակարգչային ծրագրի» բառերը՝ «համակարգի» բառով.

2) նույն կետից անհրաժեշտ է հանել «մեխանիկական» բառը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի կարգավորումների համաձայն՝ մոպեդները և հեծանիվները մեխանիկական տրանսպորտային միջոցներ չեն հանդիսանում, մինչդեռ տվյալ տրանսպորտային միջոցներով ևս կատարվում են վթարածին վարչական իրավախախտումներ:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել նաև օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում.

3) 1-ին մասի 2-րդ կետում «օնլայն» բառն անհրաժեշտ է փոխարինել «առցանց» բառով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի պահանջները.

4) 2-րդ մասը «(նկարագրությունը)» բառից հետո լրացնել «, ինտերֆեյսը» բառով.

5) 3-րդ մասը «ֆիզիկական անձանց համար» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «և հանրային ծառայության համարանիշ ունեցող կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք ունեցող» բառերով՝ բջջային հավելվածում ֆիզիկական անձի նույնականացումն ապահովելու նպատակով:

5. Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 7.4-րդ հոդվածում «բջջային հեռախոսին» բառերն անհրաժեշտ է փոխարինել «բջջային հավելվածի միջոցով՝» բառերով:

6. Նախագծում անհրաժեշտ է նախատեսել կարգավորում օրենքի ընդունումից հետո այն 6 ամիս հետո ուժի մեջ մտնելու մասին՝ պայմանավորված դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունմամբ, ինչպես նաև անհրաժեշտ ծրագրատեխնիկական ապահովում իրականացնելու համար:

7. Նախագծում անհրաժեշտ է նախատեսել դրույթներ՝ ֆիզիկական անձանց կողմից տրամադրված տեսանյութերը միանգամից ոչնչացնելու վերաբերյալ, որոնց հիմքով որոշումներ չեն կայացվում:

8. Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 7.5-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «ենթարկված» բառն անհրաժեշտ է փոխարինել «ենթակա» բառով, քանի որ էլեկտրոնային հաղորդում տված անձի տվյալները պետք է հասանելի չլինեն ոչ միայն վարչական ակտ կայացնելուց հետո, այլ նաև վարչական վարույթի ընթացքում.

2) 1-ին մասից անհրաժեշտ է հանել «այլ» բառը.

3) 2-րդ մասն անհրաժեշտ է հանել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ որևէ այլ անձ չի կարող տիրապետել էլեկտրոնային հաղորդում տված անձի անձնական տվյալներին, հետևաբար չի կարող ներկայացնել այդ անձի կողմից տրված գրավոր համաձայնությունը:

9. Հարկ է նաև նշել, որ նախագծի ընդունմամբ կանխատեսվում է ֆինանսական ծախսերի էական ավելացում, քանի որ անհրաժեշտություն է առաջանալու ձեռք բերել՝

1) Սերվեր իր պահոցով (տեսանյութերի պահպանման համար), որի ծավալը նախնական հաշվարկներով պետք է կազմի առնվազն 250 տբ: Հաշվարկն իրականացվել է RAID տեխնոլոգիաների կիրառմամբ պահպանելու պարագայում մեկ տեսանյութի ծավալը (միջինը 100 մբ) բազմապատկած 2018 թվականի ընթացքում ստատիկ տեղադրված սարքերով արձանագրված խախտումների տեսանյութերի թվով (544 000 հատ): Սերվերի արժեքը մոտավոր կազմում է 150 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի.

2) Android և iOS համակարգերի համար բջջային հավելվածներ մշակելու ծառայություն՝ արժեքը 25 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի.

3) ավելացնել ՃՈ համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների թիվը՝ նախնական հաշվարկով մինչև 35 քաղաքացիական աշխատանք կատարող աշխատակից, միջինը 200 հազ. դրամ աշխատավարձով:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագիծն ունի լրամշակման կարիք՝ եզրակացությամբ բարձրացված խնդիրների համատեքստում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ ոստիկանության պետի 2019 թվականի օգոստոսի 12-ի 2202-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ճանապարհային երթևեկության ոլորտի հիմնախնդիրների լուծման, ինչպես նաև ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման ուղղությամբ միջոցառումների մշակման նպատակով, որի կազմում ընդգրկված է նաև օրենսդրական նախաձեռնության հեղինակը, ուստիև բարձրացված հարցերը կարող են քննարկվել աշխատանքային խմբի աշխատանքների շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2019 թվականի N 1154 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-239-25.07.2019-ՊԱ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. օգոստոսի 20
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-239-25.07.2019-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի (ՀՕ-238-Ն) Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասից հետո լրացնել նոր պարբերություն հետեւյալ խմբագրությամբ.

«1.1. Սույն Օրենքով են կարգավորվում նաեւ ֆիզիկական անձանց կողմից բջջային հեռախոսներով տեսանկարահանված կամ լուսանկարահանված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումներով վարչական վարույթների առանձնահատկությունները»:

Հոդված 2. Օրենքը լրացնել 7.3., 7.4. եւ 7.5. հոդվածներով հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 7.3. Ֆիզիկական անձանց բջջային հեռախոսներով ամրագրված իրավախախտումներով վարչական վարույթի առանձնահատկությունները.

1. Ֆիզիկական անձանց բջջային հեռախոսներով ամրագրված իրավախախտումներով վարչական մարմինը վարչական վարույթ իրականացնում է, եթե.

1) ֆիզիկական անձի կողմից իրավախախտումն ամրագրվել է պետական սեփականություն հանդիսացող հատուկ մշակված համակարգչային ծրագրի օգտագործմամբ (այսուհետ՝ բջջային հավելված), որը հնարավորություն է տալիս նույնականացնել իրավախախտումն ամրագրած ֆիզիկական անձին, իրավախախտման գործիք հանդիսացող մեխանիկական տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը, ինչպես նաեւ պարզել իրավախախտումն ամրագրելու վայրն ու ժամանակը.

2) իրավախախտում ամրագրած տեսանյութը կամ լուսանկարը վարչական մարմնին ուղարկվել է համացանցային ուղիղ «օնլայն» ռեժիմով այդ նպատակով ստեղծված էլեկտրոնային հարթակին՝ որպես իրավախախտման մասին էլեկտրոնային հաղորդում:

2. Բջջային հավելվածի տեխնիկական բնութագիրը (նկարագրությունը) եւ դրանից օգտվելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Վարչական մարմինը պարտավոր է բջջային հավելվածը հասանելի դարձնել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող (բնակչության պետական ռեգիստրում հաշվառված) ֆիզիկական անձանց համար:

Հոդված 7.4. Վարչական վարույթի արդյունքների մասին ֆիզիկական անձին տեղեկացնելը

Վարչական մարմինը պարտավոր է վարչական վարույթի արդյունքների մասին տեղեկացնել իրավախախտման մասին էլեկտրոնային հաղորդում ներկայացրած ֆիզիկական անձին վարչական ակտ ընդունելու համար սույն Օրենքով նախատեսված ժամկետները լրանալուց հետո մեկօրյա ժամկետում՝ ֆիզիկական անձի բջջային հեռախոսին էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկելով: Էլեկտրոնային հաղորդագրության բովանդակությունը սահմանվում է վարչական մարմնի ղեկավարի հրամանով:

Հոդված 7.5. Իրավախախտման մասին էլեկտրոնային հաղորդում ներկայացրած ֆիզիկական անձի անձնական տվյալների փոխանցման անթույլատրելիությունը

1. Իրավախախտման մասին էլեկտրոնային հաղորդում ներկայացրած անձի տվյալները չեն կարող փոխանցվել իրավախախտման համար վարչական պատասխանատվության ենթարկված անձին, նրա ներկայացուցչին եւ երրորդ այլ անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ ֆիզիկական անձը գրավոր տվել է իր համաձայնությունը կամ իրավախախտման մասին հաղորդում ներկայացնելու կապակցությամբ վարչական մարմնին հայտնի դարձած ֆիզիկական անձի անձնական տվյալների փոխանցումը նախատեսված է օրենքով:

2. Ֆիզիկական անձի գրավոր համաձայնությունը ներկայացնելու պարտականությունը կրում է անձնական տվյալները հայցողը»:

Հոդված 3. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Տարբեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախորդ տարվա ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած թավշյա, ոչ բռնի, ժողովրդական հեղափոխությունից հետո քաղաքացիների մոտ էապես բարձրացել է վստահությունը իրավապահ մարմինների նկատմամբ: Վստահության մակարդակի բարձրացմանը զուգահեռ քաղաքացիներն այսօր ավելի պատրաստակամ են համագործակցել ոստիկանության հետ:

Սոցիալական ցանցերում ստեղծված մի քանի խմբեր, որոնց անդամների թիվը գերազանցում է տասնյակ հազարները, օրական հարյուրավոր լուսանկարներ ու տեսանյութեր են հրապարակում ճանապարհային երթեւեկության խախտումների վերաբերյալ: Այս խմբերում ներգրավված մարդիկ ցանկանում են մասնակից լինել ճանապարհաին երթեւեկության անվտանգության ապահովման գործընթացներում: Նրանք նկարահանում են իրենց տեսադաշտում հայտնված երթեւեկության խախտումները, այլ իրավախախտումներ ու հրապարակում՝ այսպիսով փորձելով ինչ-որ բան փոխել սեփական երկրի կյանքում: Սակայն այդ նպատակի իրագործման համար չկան համապատասխան օրենսդրական մեխանիզմներ: Միաժամանակ այսօր չկան նաեւ այնպիսի օրենդրական կարգավորումներ, որոնք թույլ կտան գոնե պաշտպանել այդ մարդկանց, որոնք ամեն տեսանյութ հրապարակելուց հետո ենթարկվում են բազմատեսակ սպառնալիքների: Իրավախախտներից ոմանք նույնիսկ դատարանով են սպառնում տեսանյութեր նկարող եւ տարածող քաղաքացիներին՝ մատնանշելով օրենդրական մեխանիզմների բացակայությունը:

Հասկանալով, որ միայն իրավագիտակից քաղաքացին է ունակ ստեղծելու հզոր երկիր՝ կարեւոր է, որպեսզի մենք ունենանք այդ քաղաքացու համար ստեղծված օրենդրական գործիքներ, անվտանգության երաշխիքներ: Ուստի անհրաժեշտ է ներդնել օրենսդրական գործիքակազմ, որը թույլ կտա օրենքով սահմանված կարգով ընթացք տալ քաղաքացու հեռախոսի կամ վիդեոռեգիստրատորի տեսադաշտում հայտնված իրավախախտմանը:

Հատկանշական է, որ սոցիալական ցանցերում ստեղծված այս խմբերում ծավալվող քննարկումներին շարքային քաղաքացիների հետ միասին ակտիվորեն մասնակցում են նաեւ ՀՀ ոստիկանության ներկայացուցիչները, Ազգային ժողովի պատգամավորները, կառավարության անդամները, ինչը նույնպես փաստում է համագործակցության բարձր մակարդակի մասին:

Հիմնավորման այս հատվածում հարկ եմ համարում մեջբերել «Մի? արեք այսպես» ֆեյսբուքյան բազմահազարանոց խմբի անդամների կողմից ինձ ուղարկված հաղորդագրությունից մի հատված. «Մենք (կամ հասարակության մի ստվար զանգված)

պետությունը ընկալում ենք ինչ-որ օտար, հեռու, մեզնից անկախ, մեծ հնարավորություններով օժտված, բայց եւ մեր հետ կիսվելու ցանկություն չունեցող ու նաեւ մեզ անվերջ պարտական մի մարմին: Իսկ մենք մեր կողմից կարծում ենք, որ մենք ոչինչ պարտական չենք պետությանը: Ունենք իրավունք պահանջելու, ունենք իրավունք ստանալու, բայց չունենք պարտավորություն տալու: Բայց չէ որ համաձան Սահմանադրության երկրի իշխանությունը պատկանում է ժողովրդին, հետեւաբար նաեւ վերահսկողությունն է քաղաքացիների ձեռքերում: Հասունացել է երթեւեկության հանրային վերահսկողության գաղափարը»: